

## ՆՇԽԱՐՔՆԵՐ ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱՎՈՐ ԱՎԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1985 թ-ից Իջևանի շրջանի մի շարք գյուղերում գրի ենք առել բանահյուսական բազմաթիվ նյութեր, որոնցից ներկայացնում ենք միայն մի քանի ավանդություններ ու զվարճախոսություններ: Գրանք պատմվել են և՛ քարքառով, և՛ գրական հայերենով:

**Սև քար** - Հին վախտեքը Սևքարի բնակիչները եղել են բերզե՛ կոչվող ցեղերը: Ասում են, մթան էն դուբքի քարերը սև են, դրա համար ա Սևքար կոչվում:

Պատմում են նաև, որ Եշեցա վայրում ապրողներից մեկի գոմեշները կորած են եղել: Օրեր շարունակ նրանք փնտրել են, բայց ապարդյուն: Եվ ահա, որոշ ժամանակ անց, մի երիտասարդ տղա, այդ գոմեշներն առաջն արած, եկել է: Երբ հարցրել են, թե որտեղից է գտել գոմեշները, նա պատասխանել է. «Սև քարերի մոտից»: Գոմշատիրոջը հետաքրքրել է, թե դա ինչ վայր է, որ գոմեշներն այդքան երկար ժամանակ այդտեղ են մնացել և չեն վնասվել: Տղան նրան բերել է այդ սև քարերի մոտ: Այդտեղ ընկած է եղել մի մեծ սև քար, իսկ քարի մոտ՝ մի աղբյուր: Գոմեշներն արոճ են արել, ջուրը խմել և այդպես մնացել: Այս տեղամասը շատ է դուր եկել գոմշատիրոջը, և սա իր ընտանիքով տեղափոխվել է այդտեղ: Եվ այսպես, այդ սև քարի շուրջն է համախմբվել մի ամբողջ գյուղի բնակչություն:

**Բերզեներ** (գտնվում է Սևքարի սարերում) - էտ տարածքում մի տեղ պղնձահանք ա լել, Ալավերդոց էտ բերզեներին (հույները) էկել են ըստի բնակվել, հանքերը հանել, պիրել ծախել Ֆրանսիացոց (պղինձը տեղափոխել են Անգլիա): Որ Լեհիհի հեղափոխությունն ընգլել ա, գյոռքագյոռի, տյըրանք փախել են, բայց անուճը մնացել ա: Էս մոտիկ տեղեքընը մի կյեղ ա լել, անընը Օնուլ: Էս Օնուլըն մի ժամ ա լել: Հույների ըխելքը

էս ժամի դպրոցն են քյալիս լել: Հիմի էդ ժամի փլատակները գոռով են ըեվըն: Էդ ժամի կողքին էլ գերեզմանոց ա լել, որդեղ բերզեներին են թաղել: Իսկ իրա սև քարերի խաթեր էդ կյեղը Սևքար ա կոչվըն:

**Կիրանցի վանք**<sup>2</sup> - 12-ից 14 հոգով վանք են կառուցելիս եղել: Սրանց հետ է եղել նաև մի վարպետ, որին հարզել ու սիրել են իր նրբաճաշակության համար: Եվ ահա սրանք ջանասիրաբար կառուցել են վանքը և երբ հասել են գմբեթին, վարպետը ստիպված է եղել գործը կիսատ թողնի ու շտապ գործերով մեկնի քաղաք: Սրա մեկնելուց հետո նրա աշակերտը շարունակել է գործը և չորս օրում վերջացրել: Վարպետը վերադարձել է, նայել ավարտված վանքին, աշխատանքին և ասել է, թե՛ կիրը անց ա, ու անխճորեն պատժել է 17-ամյա աշակերտին: Եվ երբ անցնողները հարցրել են, թե ինչի համար է պատժել, նրանք պատասխանել են՝ կիրանցի համար: Այդպես էլ այդ վանքի անուճը մնացել է Կիրանց:

Կիրանցի վանքում գրանցվել է մի հետաքրքիր փաստ ևս: Այդ վանքի հատակին, կենտրոնական մասում, պահպանվել է մի մեծ քար՝ վրան քանդակված աղավնի: Եվ այդ աղավնին շրջապատված է քանդակված գեղեցիկ նախշերով, որոնք փոքրիկ ծաղիկներ են հիշեցնում:

Պատմում են, որ վանքը կառուցելու ժամանակ, երբ բանվորները կաթսան դրել են կրակին՝ ճաշ պատրաստելու, որոշ ժամանակ անց նկատել են, որ մի աղավնի է պտտվում կաթսայի վերնը: Սրանք ինչ միջոց գործադրել են, չեն կարողացել աղավնուն հեռացնել այդտեղից: Եվ երբ արդեն կերակուրը պատրաստ է եղել, աղավնին ինքը ընկել է կաթսայի մեջ: Երբ բանվորները տարել ու թափել են կաթսայի պարունակու-

<sup>1</sup> Տեղացիները բերզե են անվանել հույներից:

<sup>2</sup> Այս ավանդության մեկ ուրիշ տարբերակը տես՝ Ա. Ղառապաճյան, Ավանդապատմ, Երևան,

քյունը, նկատել են, որ նրա մեջ օձի ճուտ կար: Պարզվում է, որ աղավնին օձի ճուտը կտցին անցնելիս է եղել վերևով, և որսն ընկել է կաթսայի մեջ: Նա, ինքն իրեն գոհաբերելով, փրկել է 14 բանվորների կյանքը:

**Աչաջուր** - Պատմում են, որ Քրիստոսից առաջ Ղարաբաղից վեց ախպերտիներ էկան մեր կողմերը: Նրանցից ամեն մինը մի արիեստ ուներ: Մինը հողագործ էր, մինը՝ դարբին, մինը՝ տավարած ու տեհե շարունակ: Սկզբում իրանց շենը նրանք հիմնում են մեր հիմնկվա գյուղից չորս կիլոմետր բարձր: Էդ վայրը կոչվել է Հին Աչաճյուր: Աչաճյուրը թուրքերեն բառ ա: Հնում էն կոչվել ա Հաչա Սուր: «Հաչա» նշանակում ա երկու մատնանի եղան, «սուր» էլ ա թուրքերեն բառ, որը նշանակում ա ճյուր: Էդով, տարիների ընթացքում բառը փոխվել ա ու տյառել Աչաճյուր: Էն վեց ախպերտիները արդեն բազմացած, տուն ու տեղ հիմնած են ըլլմ: Տենում են, որ իրանց դիրքը հարմար չի, իջնում են ու հիմնում մեր ներկայի Աչաճյուրը: Նրանցից մընի անընդ Ղարբին ա ըլլմ, մինը՝ Ղաթախչ, մինը՝ Գասպար, Դավիթ, Մելիք-Բեկ: Սրանք իրանց անուններովը ազգանուն են շինում, որով առաջանում են մեր հիմնկվա ազգանունները՝ Դարբինյան, Գասպարյան, Ղաթախչյան, Մելիքբեկյան և այլն:

#### **Կա նաև մեկ ուրիշ տարբերակ:**

Մարերիցը մի այտուտ կյետ ա կյալիս լել ու բաժանվել էրկու մասի՝ աջ և ձախ: Վօրդիան որ ճյուրը աջ ա քյալիս լել, ըտի մըրդկեքը տուն են շինել, ապրել: Կողքի կեղերի ժողովուրդն ասել են. «Քլմ ենք աջ ճրրի կողքին ապրող բարեկամիս կամ հընգերիս տուն»: Ու տրեհենց էլ կոչվել ա «Աչաճյուր»: Աչաճյուր (Հաչաճյուր) նշանակում ա նաև հաչածև, խաչածև ճյուր:

**Հնուտ Ենոքավանը** կոչվել ա Քրդևան: Հետո տյա Ենոքավան ա տյառել կոմունիստ Ենոքի անունիցը, որ ջախել վախտը գոհվել ա ըտի: Էդ վայրը, որը հիմի Ենոքավան ա կոչվում, առաջին անգամ էկել ա մի քյուրդ երիտասարդ, ալիսինքն՝ ջախել մի տղա: Սա ըստեղ ամուսնանում ա ու ստեղծում քըրդի ավան: Սևքարի սարվորները ամառը քյալիս են լել սարերը, ծմեռները՝ ետ եկել: Քյալ-կյալով՝ նըրանք քիչ-քիչ մնում են նաև Քրդևանընը և սյա շինում են իրենց հըմար մի ծմեռանոց: Հենց էս սարվորները

քիչ-քիչ էկել են ու դարձել Ենոքավանի ապրողներ:

Ենոքավանընը Իշարած կոչված մի հանդ կա: Պատմում են, մըքսան մի մարդ իրա տղուն դըրգըմ ա, որ էշին մտիկ անի: Էս ըրեխեն էլ էշին խըրտնընում ա, էշը կյալիս ա ու հանդիցը թու ըլլմ դքա ծյորը: Մինչև հըմի էլ ենոքավանցոց աքըմ են «Էշ թու անող ենոքավանցի»:

**Ջողազ** - «Ջողազ» պարսկերեն բառ է, նշանակում է «դժոխք»: Երբ պարսիկներն իրենց թալանած ավարով ու կողոպտուով ուզեցել են անցնել գյուղի փոքրիկ գետը (գետակի շրջակայքում իբր վխտալիս են եղել թունավոր օձեր ու կարիճներ), նկատել են այդ սողուններին ու փախել են՝ գոռալով. «Էս ինչ ջողազ ենք ընկել», ալիսինքն՝ «Էս ինչ դժոխք ենք ընկել»: Այստեղից էլ գյուղի անունը մնացել է Ջողազ, իսկ հետագայում՝ Բերքաբեր:

**Գանձաքար** - Գանձաքար գյուղի վերևում մի կիսաքանդ վանք կա: Ասում են, թե ագավը մի օր այդ վանքի գմբեթում քուջուջ անելիս է եղել: Եվ ահա այդ ժամանակ գմբեթից ոսկի է թափվել: Ու երբ մարդիկ ցանկացել են մտնել վանք ու տիրանալ այդ գանձերին, այդ ժամանակ գմբեթը փլվել է ու ոսկին ծածկել: Ու էդ ժամանակից մարդկանց հրապուրել են այդ քարերի տակ թաքնված գանձերը, բայց դրանք անմատչելի էին: Դրա համար էլ կոչվել է Գանձաքար:

**Հարսնաքար**<sup>1</sup> - Տարիներ առաջ մեր կեղընը մի հարսանիք լյավ, որի մասին շատ երկար խոսեցին: Տյա Անուշի ու Ներսեսի հարսանիքն էր: Ձուռենց կրակոտ պարեղանակ էր զլում, ու երգն ու պարը շարունակվում էր: Բայց մին էլ հըրսանքատուն ա մտնում Սմբատը: Նա կիճու մի բաժակ ա վերունում ու խմում հարս ու փեսի կենացը. «Թող աշխարհում ամեն մարդ գտնի իր կյանքի ընկերուհուն, և Ներսեսի մաննին թող չխլեն աղքատ տղեքի հարսներին...»: Հետո, էդ խոսքերի վրա հնգերնին հըրսանքատուն են մըտնում, ու սկսվում ա տուրուղմփոցը: Իսկ Սմբատը փախցնում ա Անուշին: Նրանք թափառում են անտառներում, վայելում ազատություն ու իրանց սերը իրար խոստովանում: Բայց մեր սիրահարներին հետևում են: Էնդի, Հարսնաքարի բարձունքին, ամպերին շատ մոտ էին նրանք քնում: Ու մի օր էլ նրանց փռում են. Անուշին տանում են, իսկ Սմբատին

<sup>1</sup> Ավանդության մեկ ուրիշ տարբերակը տես Ա. Ղանապանյան, Ավանդապատում, էջ 62:

ըտեղ կապում ու հիվանդում: Բայց երբ Սմբատը ուշքի ա կյալի, հասկանում ա լյածը, պըրցրանում ա գագաթներից մընին ու...

Մի քանի օրից յեղը մի հովիվ քըթընում ա նրա մարմինը: Հենց ըտի, լեռան վրա էլ քաղըն են ջահել իգիթին ու մի քար էլ տընում շիրիմին: Էդ քարը հընի մամռակալել ա, կնճռոտվել: Իսկ Անուշը մի քանի տարի ապրեց Ներսեսի հետ, քայց ըրեխա չունեցավ ու մի քանի տարուց յեղը հրաժեշտ տվեց էս աշխարհին ու քյաց իր սիրած Սմբատի մոտ:

**Գյուլումջան** - Գյուլումջանը Լուսաճորի սարն ա: Էդ սարընը շատ ծաղիկներ կան՝ տարբեր գույների: Ասըն են, թե մի վախտ կեղի ջահել ըղջկեքը էդ ծաղիկնին քաղել են, պասակ հյուսել, տրել կըլխներին: Համ հյուսել են, համ խմբով «Գյուլում ջան» երգն են երգել: Ըտիանց էդ սարի անընը մնացել ա «Գյուլումջան»:

**Տեղանուններն իրենց մեջ ունեն մի ամբողջ պատմություն:**

Անուններ, որոնք անընդհատ փոփոխվել են և գուցե իրենց հետ էլ փոխել են շատ քաներ՝ հին սովորույթներ, բարբեր:

Հետաքրքիր են նաև գվարճախոսությունները: Ինչպես գիտենք, Հայաստանի գրեթե բոլոր վայրերում հորինվում են գվարճախոսություններ, որոնք բնորոշ են տվյալ շրջանին, վայրին, բնակիչներին (ժլատ վանեցի, միամիտ լոռեցի, մեծախոս գյումրեցի և այսպես շարունակ):

Իջևանում նույնպես պատմվում են ամենկողտներ անհատ մարդկանց, ինչպես նաև հարևան գյուղացիների մասին, որոնց մեջ, որպես «անեաշտ» հարևաններ, առանձնանում են Աշաջուր և Սևքար գյուղերը:

\*\*\*

Պատերազմական շրջանում մի սևքարեցի հարբած մարդ տուն ա գալիս՝ մի թընդանոթի փամփուշտ ձեռքին: Կինը զարմանում ու վախենում ա, թե սա ինչի համար ա բերել, քայց դե հարբած մարդ ա, հո չես կարա խոսաա: Ամուսինը օրորվելով մոտենում ա վառարանին, գոլշորեն քացում դուռը և վայրկենապես թնդանոթի փամփուշտը գցում մեջը, իսկ վառարանի խողովակը ուղղում հարևան Աշաջուր գեղի վրա: Մի քանի վայրկյանից վառարանը պայթում ա: Շուտով վրա են հասնում հարևաննին, կինը ու հարցնում են, թե «Էս ինչ արիր, տուն ու տեղերնուս քանդեցիր»: Սա ոգևորված պատասխանում ա. «Հյա մի տո՛ս կցեք, չեք մտածում, որ եթե սա էստեղ սենց արեց, բա հիմա Աշաջորի տեղը մյաշուր չի՞»:

\*\*\*

Մի աշաջրեցու հարցնում են. «Դուք ծեգ էդքան կյովում եք, ծեր գյուղից դուրս էկած, ծեր գյուղացի մի հերոս աաա, տեսնեմ»: Սա պատասխանում ա. «Կարողա չունե՞նք, էնքան շատ ունենք: Դրանք են Սևքարեցի Սաքոն, Ուզունթալցի Էդոն...»:

\*\*\*

Մի մարթ կետի դրաղովը քըլնալիս ա ըլում, տենում ա մինը խեղդվում ա: Սա մտնում ա կյետը ու սրան փրկում: Էս դրաղի օքմենին տենում են, վեր էս մարթը էն խեղդվողին ճրիցը հանեց ու նորից ճյուրը քցեց: Կյալիս են ասըն. «Այ մարթ, էդ խի տհենց արիր»: Ասըն ա. «Բա ժողովուրդը չի ասըն, որ լավութին արա, ճյուրը քցի»:

**Ա. Ա. ՄՆԻՔԱՐՅԱՆ**